ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՆԻ՝ ՈՐՊԵՍ ՊԱՏԵՐԱԶՄ ՎԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ

Իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ավագ դասախոս,
Հայ-Ռուսական համալսարանի ավագ դասախոս
DOI:10.61746/18292984-2026.1.28cmt-02

Համառոտագիր: Հոդվածում հեղինակը բացահայտել է դրոնի՝ որպես անօդաչու թռչող սարքի չափանիշները, ներկայացրել դրա առանձնահատկությունները: Հեղինակը մանրակրկիտ ներկայացրել է պատերազմի ժամանակ դրոնի՝ որպես պատերազմ վարելու միջոցի արգելված կամ թույլատրելի լինելու հարցը, դասակարգել այդ միջոցները, արգելված միջոցները ներկայացրել երկու հարթությամբ՝ ուղղակի արգելված և անուղղակի արգելված, ներկայացրել պատերազմ վարելու արգելված միջոցները՝ ըստ կոնկրետ միջազգային-իրավական ակտերի՝ շեշտադրելով մարդու իրավունքների պաշտպանության հանգամանքը:

Բանալի բառեր: ռազմական դրոն, արգելված միջոց, արգելված զենք, պատերազմելու իրավունք, մարդու իրավունքների պաշտպանություն

1. ԱՆՕԴԱՉՈՒ ԹՌՉՈՂ ՍԱՐՔ (ԴՐՈՆ). ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Անօդաչու թռչող սարքերի (այսուհետ նաև՝ ԱԹՍ) օգտագործումը (շահագործումը) սկսվել է ավելի վաղ, քան առևտրային ինքնաթիռներինը (օդանավերինը): Այսօր անօդաչու թռչող սարքերը կարելի է դասակարգել **ռազմական և քաղաքացիական**[1] տեսակների:

[1] Քաղաքացիական ԱԹՍ-ները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝
- ✓ **ժամանցը, հանգիստը կազմակերպելու** համար (օրինակ՝ սեփական հարսանեկան արարողության տեսանկարահանում),
- ✓ **առևտրային** նպատակով (օրինակ՝ սննդի առաքում),
- ✓ **ծառայողական, աշխատանքային նպատակով** (օրինակ՝ սահմանային վերահսկողություն, անտառային պարեկություն, դաշտային աշխատանքների կազմակերպում),
- ✓ **կրթական և հետազոտական** նպատակով (օրինակ՝ ուսումնական հաստատությունների, հետազոտական կենտրոնների կողմից),
- ✓ **մարդասիրական նպատակով** (հեռավոր, բարձր լեռնային վայրեր, աղետից տուժած բնակավայրեր ապրանք տեղափոխել):

Հաճախ «անօդաչու թռչող սարք» բառի փոխարեն «դրոն» բառն է օգտագործվում, երբեմն՝ այլ եզրույթներ[2], ընդ որում՝ դրանցից մի քանիսը պարզապես հոմանիշներ են, մի քանիսն ունեն որոշ տարբերություններ, բայց էությունը բոլորի դեպքում էլ նույն է: Ավելին, **ի սկզբանե «դրոն» բառն օգտագործվել է ռազմական համատեքստում,** այսինքն՝ «դրոն» ասելով հասկացել են միայն ռազմական դրոնը՝ հետախուզական, հարձակողական: Հետագայում այն սկսվել է օգտագործվել նաև քաղաքացիական համատեքստում:

Դրոնը **նայող աչք** է, որը դարձել է զենք[3]: Այն օդանավ է, որը տարբերվում է իր չափսով, արժեքով, ճկունությամբ և կոչվում է դրոն՝ միևնույն ժամանակ հայտնի լինելով նաև այլ անվանումներով՝ **անօդաչու օդային փոխադրամիջոց, անօդաչու օդային համակարգեր, հեռակա կառավարվող օդային փոխադրամիջոց, հեռակա կառավարվող օդային համակարգեր**[4]:

Անօդաչու թռչող սարքը (ԱԹՍ) վերաբերում է **շարժիչով աշխատող օդանավին**, որը նախատեսված է թռչելու **առանց մարդ-օպերատորի**[5]: Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ-ի) կողմից ԱԹՍ-ն սահմանվում է որպես **ցանկացած ինքնաթիռ,** որը նախատեսված է թռչելու առանց օդաչուի, ավելին՝ այն կարող է հեռակառավարվել և լիովին կառավարվել մեկ այլ վայրից (գետնից, մեկ այլ ինքնաթիռից, տիեզերքից) կամ նախապես ծրագրավորվել իր թռիչքն իրականացնելու՝ առանց միջամտության[6]:

Անօդաչու թռչող սարքերի համակարգ[7] ասելով անհրաժեշտ է հասկանալ ԱԹՍ-ն՝ շարժիչով աշխատող թռչող սարքը, որը նախատեսված է թռչելու **առանց մարդ-**

---

[2] Unmanned Aerial Vehicle (UAV), Unmanned Aircraft System (UAS), Remotely Piloted Aircraft (RPA), Remotely Operated Aircraft (ROA), Remotely Piloted Aviation Systems (RPAS), Autonomous Drone, Autonomous Flying Robot, Uncrewed Aircraft, Unmanned Flying Vehicle (UFV), Unmanned Flying Machine (UFM), Unmanned Flying Craft (UFC), Unoccupied Aircraft System (UAS), **Unmanned Combat Aerial Vehicles (UCAVs), Hunter-Killer Drone, Hunter Robots, Lethal Autonomous Weapons Systems (LAWS).** Ընդ որում՝ վերջին չորսը ռազմական դրոններ են:

[3] Chamayou G., A Theory of the Drone, 2015, p. 11.

[4] Kakaes K., Drone Wars Transforming Conflict, Law, and Policy, 2014, Cambridge Press University, pp. 359 – 387.

[5] Kutty A., Tavawalla H. and Parikh V., Article, The Future of Drones: Can they be Legitimized? 2015, https://u.to/4N5xIg, (վերջին մուտք՝ 29.12.2025)

[6] Remotely Piloted Aircraft System Concept of Operations for International Operations, ICAO, p. 1, www.icao.int, (վերջին մուտք՝ 29.12.2025)

[7] Բնօրինակ լեզվում՝ անգլերենում, օգտագործվել է **«unoccupied»** բառը, որը նույն նախադասության համատեքստում թարգմանվում է որպես **«չզբաղեցված, մարդու ներկայությունից ազատված» թռչող սարք:**

օպերատորի և **անօդաչու թռչող սարքը կառավարելու համար անհրաժեշտ բոլոր սարքավորումների ու անձնակազմի** (օրինակ՝ դրոնը)[8]. Դրոնը շարժիչով աշխատող օդային տրանսպորտային միջոց է, որը չի տեղափոխում մարդ-օպերատոր, օգտագործում է աերոդինամիկ ուժեր՝ տրանսպորտային միջոցի վերելքն ապահովելու համար, կարող է թռչել ինքնուրույն կամ հեռակառավարվելով, կարող է տեղափոխել մահացու կամ ոչ մահացու բեռ: **Բալիստիկ կամ կիսաբալիստիկ** տրանսպորտային միջոցները, **թևավոր հրթիռները և հրետանային արկերը** չեն համարվում անօդաչու օդային տրանսպորտային միջոցներ[9]:

Ռազմական դրոնները նաև կոչվում են **անօդաչու մարտական օդային փոխադրամիջոցներ, որսորդ-ոչնչացնողներ (մահ՝ երկնքից)**[10]:

Վերոնշյալի լույսի ներքո կարող ենք եզրահանգել, որ **դրոնն ավտոմատացված, հեռակառավարվող անօդաչու սարք է**, ինչպես ուղղաթիռը, օդանավը:

«Անօդաչու (pilotless)» *նշանակում է, որ թռչող սարքը չունի օդաչու (այդ թվում՝ անձնակազմի անդամ, ուղևոր): Այսինքն՝ դասական օդաչուն փոխարինված է հեռակավարող օդաչուով կամ միգուցե ինքնակառավարվող արհեստական բանականությամբ աշխատող ծրագրով:*

«Ավտոմատ» *նշանակում է, որ դրոնը նախապես ծրագրավորված է՝ հնարավոր ռիսկերի, գործունեության սահուն ընթացքի համար, ավելին՝ այն կարող է գտնել ռիսկերը և լուծել դրանք: Այս դեպքում դրոնը գործում է առանց մարդկային անմիջական միջամտության:*

«Հեռակառավարվել անձի կողմից» *նշանակում է, որ դրոնի կառավարումը որոշակի հեռավորությունից իրականացնում է անձը կամ արհեստական բանականությամբ աշխատող համակարգը, այսինքն՝ ֆիզիկական իմաստով դրոնը և մարդը (կառավարողը) գտնվում են տարբեր վայրերում:*

2. ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՆ. ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գնալով մեծանում է դրոնի օգտագործումը **տակտիկական օդային հարձակման, հետախուզական տվյալների հավաքագրման** ոլորտում: Միևնույն

---

[8] Cadets and Junior Canadian Rangers Group Order, 8030-13, Unoccupied Aircraft Systems, 3, Definitions, https://u.to/595xIg, (վերջին մուտք՝ 29.12.2025)

[9] https://u.to/7d5xIg, (վերջին մուտք՝ 29.12.2025)

[10] Sluka J., Death from above, Military Review, Article, 2013, p. 89.

ժամանակ, պետությունները հակաքայլեր են ձեռնարկում դրանց հակադարձելու ուղղությամբ՝ ստեղծելով **հակաարբանյակային հրթիռային զենքի համակարգեր** (anti-satellite (ASAT) missile weapons systems), **վերգետնյա հրթիռային զենքի լազերային համակարգեր** (ground-based ASAT disruptive lasers (non-kinetic-kill systems)), **տիեզերքահեն դրոն ռմբակոծիչներ** (space-based drone bombers)[11]:

Դրոնը կարող է կառավարվել երբեմն մղոնների հեռավորության վրայից, այն կարող է ծառայել և՛ որպես ռազմական գործողության մասնակից՝ կոմբատանտ (combatant), և՛ որպես մարտին օժանդակող միջոց[12]: Դրոնը նույն հարթակում համակցում է մի քանի փոխլրացնող տեխնոլոգիաներ[13]:

Դրոնի վրա կարող են տեղադրված լինել բարձրորակ ձայնագրառման, տեսանկարահանման (այդ թվում՝ ուղիղ, կենդանի) սարքավորումներ, ջերմային սենսորներ և ռադար, ինֆրակարմիր տեսախցիկներ, ճշգրիտ զինատեսակներ, տարբեր սարքավորումներ, այդ թվում՝ տեղորոշիչ բնույթի (GPS), դրանք դրսում՝ օդում, կարող են մնալ ժամերով կամ օրերով, ավելին՝ կարող են կրել Wi-Fi կոտրիչներ (crackers), հանդես գալ որպես կեղծ բջջային հեռախոսի աշտարակներ՝ տեղորոշելու հակառակորդին կամ միջամտելու վերջինիս հեռախոսային և տեքստային հաղորդագրություններին[14]:

3. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Անօդաչու թռչող սարքերի շահագործումը կարգավորելու ոլորտում բազմակողմ կոնվենցիա չկա: Միայն **Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին 1944 թվականի Չիկագոյի կոնվենցիան** (այսուհետ նաև՝ **Չիկագոյի կոնվենցիա**) է[15], որ որոշակի կարգավորում է առաջարկում:

Ճիշտ է, Չիկագոյի կոնվենցիան կարգավորում է **քաղաքացիական ինքնաթիռների** գործունեությանն առնչվող հարցեր, բայց դրա 8-րդ հոդվածը

---

[11] Ghoshroy S., Montonen C., Scheffran J., Webb S., Missile Defense Systems and Weapons in Space: Anti-satellite Weapons and Ballistic Missile Defense: the Siamese Twins? www.researchgate.net/publication/357470139, (վերջին մուտք՝ 29.12.2025).

[12] Valdes R., How the Predator UAV Works, How Stuff Works, 1-2004, https://u.to/9d5xIg, (վերջին մուտք՝ 29.12.2025).

[13] Igoe Walsh J., The Effectiveness of Drone Strikes in Counterinsurgency and Counter Terrorism Campaigns, Strategic Studies Institute and U.S. Army War College Press, V- 2013, p. 32.

[14] Surveillance Drones, https://u.to/995xIg, (վերջին մուտք՝ 29.12.2025).

[15] Այն ՀՀ իրավական համակարգի մասն է 18.07.1992 թվականից:

վերաբերում է **«անօդաչու օդանավերին»:** Հավելենք, որ Չիկագոյի կոնվենցիան ունի 18 հավելված: 2-րդ հավելվածը (Օդային կանոններ) հատուկ փոփոխվել է 2012 թվականին՝ ներառելով նոր **ենթահավելված 4-ը (Հեռակառավարվող ինքնաթիռային համակարգեր, remotely piloted aircraft system):**

Քաղաքացիական ավիացիայի ոլորտում այլ կոնվենցիաներ նույնպես սահմանում են որոշ կանոններ[16], որոնք որոշակիորեն վերաբերում են նաև ԱԹՍ-ներին, բայց հիմնական կարգավորումը թողնված է **ազգային** և **վերազգային** (օրինակ՝ Եվրոպական միությունում[17]) մակարդակներում:

Ինչպես նկատեցինք, վերը նշված իրավական հիմքերը վերաբերում են **քաղաքացիական համատեքստում դրոնների շահագործմանը**: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ **Չիկագոյի կոնվենցիան կարգավորում է քաղաքացիական ավիացիային առնչվող հարցեր**, հետևաբար՝ ռազմական ավիացիայի հարցերի կարգավորումը, այդ թվում՝ **ռազմական դրոնի կիրառության հետ կապված հարցերը դուրս են նշված կոնվենցիայի կարգավորման շրջանակից**:

4. ՊԱՏԵՐԱԶՄ ՎԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ. ԴՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Ինչ վերաբերում է ռազմական դրոնների կիրառությանը, շահագործմանը, ապա այն պետք է դիտարկել **պատերազմ վարելու միջոցների համատեքստում:**

Դրոնը և՛ զենք է, և՛ փոխադրամիջոց: Մարտի դաշտում, պատերազմական գործողությունների ժամանակ այն ավելի շատ որպես զենք է կիրառվում: Երբեմն նշվում է, որ դրոնը ճշգրիտ զենք է[18]՝ կարևորելով դրա առաջադրանքի կատարման արդյունավետության աստիճանը:

---

[16] Մասնավորապես,

- ✓ 1929 թվականի միջազգային օդային փոխադրումների վերաբերյալ որոշակի կանոնների միավորման մասին կոնվենցիա **(Վարշավայի կոնվենցիա),**
- ✓ 1952 թվականի օդային տարածքում օտարերկրյա ինքնաթիռների կողմից երրորդ կողմերին պատճառված վնասի մասին կոնվենցիա **(Հռոմի կոնվենցիա),**
- ✓ 1970 թվականի ինքնաթիռների անօրինական զավթումը կանխելու մասին կոնվենցիա **(Հաագայի կոնվենցիա),**
- ✓ 1971 թվականի քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների կանխարգելման մասին կոնվենցիա **(Մոնրեալի կոնվենցիա):**

[17] ԵՄ 216/2008 կանոնակարգը EASA-ին (EU Aviation Safety Agency) լիազորում է կարգավորել **150 կիլոգրամ և ավելի քաշ ունեցող անօդաչու թռչող սարքերին առնչվող հարցերը.** Կարգավորիչ ակտ կարող է նաև լինել **2009/48** դիրեկտիվը, որը վերաբերում է **խաղալիքների, այդ թվում՝ թռչող խաղալիքների (flying toys) անվտանգությանն առնչվող հարցերին:**

[18] Walsh J., University of North Carolina at Charlotte Precision Weapons, Civilian Casualties, and Support for the Use of Force // Political Psychology, Vol. 36, 2015, p. 507

Նշենք, որ ռազմական դրոնի օգտագործման հարցն ուսումնասիրվում է **պատերազմ վարելու միջոցի** շրջանակում, քանի որ պատերազմ վարելու միջոցը **զենքն**[19] **է, ռազմամթերքը**[20]**:**

Պատերազմ վարելու մեթոդը մարտավարությունն է, հնարքը, տակտիկան, պատերազմ վարելու միջոցների օգտագործման տարբեր **եղանակները:** Պատերազմ վարելու արգելված մեթոդներից են՝ հակառակորդին սպանելը, վիրավորելը կամ գերի վերցնելը՝ **ուխտադրժության դիմելով,** ոչ մեկին կենդանի չթողնելու հրաման տալը, սովը, չեզոք պետությունների դրոշները կամ համազգեստն օգտագործելը և այլն:

Ըստ այդմ՝ պատերազմ վարելու միջոցները լինում են՝ **արգելված և թույլատրելի:**

Արգելված *են այն միջոցները, որոնց կիրառման (օգտագործման, շահագործման) վերաբերյալ առկա է* ***ուղղակի*** *կամ* ***անուղղակի արգելք:***

Ուղղակի արգելքի *դեպքում հստակ, կոնկրետ ամրագրված է, որ այս զենքը* ***արգելված է****, օրինակ՝ Քիմիական զենքի կոնվենցիան արգելում է քիմիական զենք մշակել, արտադրել, այլ կերպ ձեռք բերել, կուտակել կամ պահպանել:*

Անուղղակի արգելքի *դեպքում հստակ, կոնկրետ ամրագրում չկա վերջինիս չկիրառման վերաբերյալ, օրինակ՝ 1968 թվականի միջուկային զենքի չտարածման մասին պայմանագիրը, որի առաջնային նպատակը միջուկային զենքի տարածումը կանխելն է, միջուկային զինաթափումն առաջ մղելը: Այսինքն՝ այս փաստաթուղթն* ***ուղղակի չի արգելում*** *դրա կիրառումը, քանի որ մի քանի պետություն ունեն միջուկային զինանոց և դժվար թե հրաժարվեն դրանից, միևնույն ժամանակ,* ***այլ պետություններին****, որոնք չունեն, սակայն ձգտում են ունենալ միջուկային զենք,* ***չի խրախուսվում:*** *Այսինքն՝ անուղղակի արգելքը* ***պասիվ վարքագծով արգելքի տանող անորոշություն*** *է, քանի որ կոնկրետ ամրագրում չկա վերջինիս չկիրառման վերաբերյալ, պետություններն առավելապես* ***պասիվ, չեզոք վարքագիծ*** *են դրսևորում նմանատիպ միջոցների կիրառության վերաբերյալ, ինչը պարարտ հող է ստեղծում անորոշության համար, իսկ որևէ պետության կողմից կիրառվելու դեպքում միանշանակ արձագանքներ չեն լինում:*

---

[19] **Զենք՝** սարք կամ առարկա, որը նախատեսված է **կենդանի կամ այլ նշանակետ խոցելու, վնասազերծելու կամ ազդանշան արձակելու** համար: («Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ)»

[20] **Ռազմամթերք՝** նշանակետը խոցելու համար նախատեսված առարկաներ, սարքեր և նետվող հարմարանքներ, որոնք պարունակում են **պայթուցիկ, նետողական, հրատեխնիկական, արտամղիչ լիցքեր, կամ դրանց համակցություն** («Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ):

Հաշվի առնելով ***վերջիններիս կործանարար ազդեցությունը՝մարդկության, բնության վրա՝*** *քայլեր են ձեռնարկվում, որ պետություններին զսպեն այդպիսի միջոցներ՝ զենքեր արտադրելուց, կիրառելուց: Օրինակ՝ խոսքը զանգվածային ոչնչացման զենքի նոր տեսակների՝* ***ռադիոլոգիական, ճառագայթային, ինֆրաձայնային*** *զենքի մասին է:*

Թույլատրելի *են այն միջոցները, որոնց կիրառման վերաբերյալ արգելք առկա չէ, այսինքն՝ չի արգելում դրանց օգտագործումը՝ միևնույն ժամանակ* ***պահպանելով պատերազմ վարելու կանոնները՝*** *ըստ միջազգային մարդասիրական իրավունքի* ***չորս հիմնարար սկզբունքների՝*** *տարբերակման, համաչափության, նախազգուշացման և ռազմական անհրաժեշտության:*

5.ՊԱՏԵՐԱԶՄ ՎԱՐԵԼՈՒ ԱՐԳԵԼՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Պատերազմ վարելու արգելված միջոցներից են՝ հակահետևակային ականները, լազերային զենքերը, որոնք հատուկ նախատեսված են մշտական կուրություն առաջացնելու համար, կասետային զինամթերքը, քիմիական և կենսաբանական զենքերը, իսկ որոշակի սահմանափակում ունեն նապալմային ռումբերը (napalm bombs)[21] և բոցավառիչները[22]:

«Միջազգային զինված կոնֆլիկտների զոհերի պաշտպանության վերաբերյալ» ժնևի 1949 թվականի օգոստոսի 12-ի կոնվենցիաներին կից ժնևի 1977 թվականի լրացուցիչ արձանագրության (այսուհետ՝ Առաջին լրացուցիչ արձանագրություն) 35-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ արգելվում է կիրառել այնպիսի **զենք, նյութեր և պատերազմի վարման այնպիսի մեթոդներ,** որոնք կարող են ավելորդ վնասներ կամ ավելորդ տառապանքներ պատճառել:

Վերը նշվածից բխում է, որ կողմերի պատերազմ վարելու ***մեթոդների և միջոցների կիրառության իրավունքը բացարձակ չէ,*** *այսինքն՝ կողմերը չեն կարող օգտագործել որոշակի մեթոդներ և միջոցներ հակառակորդին ոչնչացնելու համար, այլ կերպ ասած՝ պատերազմելու ժամանակ ևս կիրառելի են մարդասիրության և մարդու հիմնարար իրավունքները պաշտպանելու մոտեցումները, հետևաբար՝ հակառակորդին*

---

[21] Այն ստացվում է բենզինի հետ խառնված փոշուց: Նապալմը՝ հրավառության ռումբի վառելիքի գելային խառնուրդը, ունի գելանման բաղադրիչ, ինչը թույլ է տալիս այն կպչել թիրախներին: Նապալմը հաճախ օգտագործվում է բենզինի կամ ռեակտիվ վառելիքի հետ համատեղ՝ բարակ արտաքին թաղանթով ռումբ պատրաստելու համար, որը հեշտությամբ պայթում և բռնկվում է թիրախի հետ բախվելիս (https://u.to/-d5xIg, վերջին մուտք՝ 29.12.2025):

[22] Arakelian M., Bekhruz Kh., Yarova L., Prohibited Means and Methods of Armed Conflicts, Amazonia Investiga, Vol. 9, Núm. 26, Febrero 2020, p. 353

ցանկացած գնով, անսահմանափակ միջոցներով վնաս հասցնելու, ոչնչացելու կանոն չկա, քանի որ ***ուժի կիրառումը վերահսկելիի, թույլատրելիի սահմաններում պետք է լինի:***

Այստեղ զենքի, ռազմամթերքի ստեղծման լուրջ խնդիր է այն, որ պետությունները չեն կարողանում ընդհանուր պատկերացում կազմել **պատերազմի որոշակի միջոցի պատճառած վնասի չափազանցության մասին** և, հետևաբար, **դրանք անօրինական դասակարգել**, ինչպես նաև մշակել այս ոլորտում համընդհանուր չափանիշներ[23]:

Ստորև ներկայացված են պատերազմի ժամանակ արգելված միջոցները:

1868 թվականի Սանկտ Պետերբուրգի հռչակագիրն արգելում է **400 գրամից պակաս քաշ ունեցող արկերի օգտագործումը**, եթե դրանք պայթող էին կամ լցված էին պայթուցիկ կամ դյուրավառ նյութերով, և դրա կանոնները նպատակ ունեին արգելել այնպիսի զենքերի օգտագործումը, որոնց օգտագործումը կարող էր անհարկի տառապանքներ պատճառել:

«Պատերազմի ժամանակ խեղդող, թունավոր կամ այլ գազերի և պատերազմի մանրէաբանական մեթոդների կիրառման արգելքի մասին» Ժնևի 1925 թվականի կոնվեցիայի լրացուցիչ արձանագրության համաձայն՝ արգելվում է պատերազմում **խեղդող, թունավոր կամ այլ գազերի**, ինչպես նաև բոլոր նմանատիպ հեղուկների, նյութերի կամ սարքերի օգտագործումը: Բացի այդ, բարձր պայմանավորվող կողմերը (…) համաձայնում են տարածել այս **արգելքը պատերազմի մանրէաբանական մեթոդների** կիրառման վրա:

«Որոշակի ավանդական զենքերի մասին» 1980 թվականի կոնվենցիայի[24] նպատակն այնպիսի արգելքների կամ սահմանափակումների մասին էր, **որոնք կարող են համարվել չափազանց վնասակար կամ ոչ տարբերակված ազդեցություն ունեցող:** Այս կոնվեցիան ունի լրացուցիչ արձանագրություններ, մասնավորապես՝

Առաջին արձանագրության համաձայն՝ արգելվում է օգտագործել ցանկացած զենք, որի հիմնական ազդեցությունը **մարդու մարմնում գտնվող բեկորներով վնասվածք** հասցնելն է, որոնք **չեն հայտնաբերվում ռենտգենյան ճառագայթներով:**

---

[23] Boothby W., Weapons and the Law of Armed Conflict, New-York, 2009, p. 412.

[24] Լրիվ անվանումը՝ «Որոշակի ավանդական զենքերի օգտագործման արգելքների կամ սահմանափակումների մասին, որոնք կարող են համարվել չափազանց վնասակար կամ ոչ տարբերակված ազդեցություն ունեցող» 1980 թվականի կոնվենցիա

Երկրորդ արձանագրության համաձայն՝ արգելվում է **որոշակի ականների, ականային թակարդների և այլ սարքերի օգտագործումը՝** կոնվեցիայով նախատեսված շրջանակում: Մասնավորապես, արգելվում է օգտագործել **հակահետևակային ականներ, որոնք չեն հայտնաբերվել** (հոդված 4), արգելվում է օգտագործել **զենքեր, որոնք չեն համապատասխանում ինքնաոչնչացման և ինքնաանջատման** վերաբերյալ դրույթներին (հոդված 5), արգելվում է հեռակա տեղակայման միջոցով ականների օգտագործումը (…) (հոդված 6), արգելվում է օգտագործել **թակարդ-ականներ**[25] և այլ սարքեր, որոնք որևէ կերպ **միացված են կամ կապված են մարդուն** (…), (հոդված 7):

Երրորդ արձանագրության համաձայն՝ արգելվում է **հրկիզող զենքի** օգտագործումը:

Չորրորդ արձանագրության համաձայն՝ արգելվում է **կուրացնող լազերային զենքի** օգտագործումը:

«Հակահետևակային ականների օգտագործման, կուտակման, արտադրության, փոխանցման արգելման և դրանց ոչնչացման մասին» 1997 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր մասնակից պետություն **պարտավորվում է երբեք և ոչ մի պարագայում** չօգտագործել **հակահետևակային ականներ**[26], մշակել, արտադրել, այլ կերպ ձեռք բերել, կուտակել, պահպանել կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն որևէ մեկին փոխանցել հակահետևակային ականներ, որևէ կերպ օգնել, խրախուսել կամ դրդել որևէ մեկին զբաղվելու արգելված ցանկացած գործունեությամբ:

Կենսաբանական զենքի կոնվենցիայի[27] 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է երբեք և ոչ մի պարագայում չմշակել, արտադրել, կուտակել կամ այլ կերպ ձեռք բերել կամ պահպանել **մանրէաբանական**

---

[25] **«Թակարդ-ական»** նշանակում է ցանկացած սարք կամ նյութ, որը նախագծված, կառուցված կամ հարմարեցված է սպանելու կամ վիրավորելու համար, և որը գործում է անսպասելիորեն, երբ անձը խանգարում կամ մոտենում է թվացյալ անվնաս առարկայի կամ կատարում է թվացյալ անվտանգ գործողություն (հոդված 2):

[26] **«Հակահետևակային ական»** նշանակում է ական, որը նախատեսված է պայթեցնելու անձի ներկայությամբ, մոտիկ գտնվելով կամ ականի հետ շփման միջոցով և որը մեկ կամ մի քանի անձանց կվնասի, կսպանի կամ կխեղի (հոդված 2, կետ 1):

[27] Լրիվ անվանումը՝ «Մանրէաբանական (կենսաբանական) և թունավոր զենքի մշակման, արտադրության, կուտակման արգելման և դրանց ոչնչացման մասին» 1972 թվականի կոնվենցիա:

կամ այլ կենսաբանական նյութեր կամ թույներ՝ անկախ դրանց ծագումից կամ արտադրության եղանակից, այնպիսի տեսակներով և քանակներով, որոնք որևէ արդարացում չունեն պրոֆիլակտիկ, պաշտպանական կամ այլ խաղաղ նպատակներով օգտագործելու համար:

Քիմիական զենքի կոնվենցիայի[28] 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է երբեք և ոչ մի պարագայում մշակել, արտադրել, այլ կերպ ձեռք բերել, կուտակել կամ պահպանել **քիմիական զենք** կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն փոխանցել քիմիական զենք որևէ մեկին, օգտագործել քիմիական զենք, մասնակցել քիմիական զենքի օգտագործման ցանկացած ռազմական նախապատրաստության:

Հաշվ առնելով **թե՛ կենսաբանական (մանրէաբանական), թե՛ քիմիական զենքերի** կիրառության արդյունքում առաջացած բացասական հետևանքները, որոնք ունակ են **սպանել, անաշխատունակ դարձնել մարդկանց, մարտավարական կարևորության տարածքն անանցանելի դարձնել** անձանց համար[29], այդ զենքերի օգտագործման արգելքն ուղղված է նրան, որ հնարավոր լինի չեզոքացնել դրանց կիրառմամբ վրա հասնող **անդառնալի կորուստները:**

*Վերը նշված իրավական նորմերի վերլուծությունից կարող ենք եզրահանգել, որ արգելված են այն զենքերը, որոնք **ծայրահեղ ծանր** և **անդառնալի հետևանքներ կարող են առաջացնել ոչ միայն մարդկության, այլ նաև բնության համար** (օրինակ՝ քիմիական, մանրէաբանական կամ այլ կենսաբանական զենքի օգտագործումը):*

*Այսինքն՝ վերջիններիս **ավերիչ, կործանարար** բնույթը (օրինակ՝ հրկիզող զենքի օգտագործումը) **ահռելի** և **սահմռկեցուցիչ մարդկային տառապանքներ պատճառելն է** (օրինակ՝ խեղդող, թունավոր կամ այլ գազերի օգտագործումը, կուրացնող լազերային զենքի օգտագործումը), կանխորոշել դրանց՝ որպես պատերազմ վարելու արգելված միջոցի շարքին դասելը, հետևաբար՝ որևէ պարագայում դրանց օգտագործումը **չի կարող արդարացվել:***

*Այդ արգելված միջոցների՝ զենքերի օգտագործումն **անհամատեղելի է մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության, մարդու իրավունքները հարգելու,***

---

[28] Լրիվ անվանումը՝ «Քիմիական զենքի մշակման, արտադրության, կուտակման և օգտագործման արգելման և դրա ոչնչացման մասին» 1993 թվականի կոնվենցիա:

[29] Biological Warfare, Biological Agents, https://www.sciencedirect.com, (վերջին մուտք՝ 29.12.2025).

մարդասիրության *հետ*[30]*. դրանք կործանարար, չտարբերակող, համատարած վնասակար միջոցներ են:*

6. ԱՐԳԵԼՈՂ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆՈՂ ՆՈՐՄԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՆԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ինչպես վերը նշվեց, մի շարք զենքերի կիրառման վերաբերյալ առկա է արգելք, այսինքն՝ **առկա է արգելող նորմ (իրավական հիմք):**

Անհրաժեշտ է նշել, որ ըստ արտահայտման ձևի՝ իրավական նորմերը կարող են լինել **լիազորող, պարտավորեցնող և արգելող**[31]:

Այսինքն՝ արգելող նորմի դեպքում նորմի կիրառողը պետք է ձեռնպահ մնա արգելքի խախտումից, չխախտի այն: Սույն դեպքում պետությունները, հաշվի առնելով պատերազմ վարելու որոշ միջոցների՝ զենքի, ռազմամթերքի արգելքի վերաբերյալ առկա իրավական կարգավորումները, պատերազմի, ռազմական գործողությունների ժամանակ չպետոք է կիրառեն այդ միջոցները: Օրինակ՝ քիմիական զենքի կիրառման վերաբերյալ առկա է արգելք (արգելող նորմ)՝ սահմանված Քիմիական զենքի կոնվենցիայում, հետևաբար՝ յուրաքանչյուր անգամ քիմիական զենքի կիրառության հարցը քննարկելիս ելակետ է ընդունվելու արգելքի առկայությունը, այսինքն՝ **արգելող իրավական հիմքի առկայությունը բավարար է վերջինիս կիրառությունն անթույլատրելի դիտարկելու համար:**

Ռազմական դրոնի կիրառության վերաբերյալ **որևէ արգելք (միջազգային-իրավական ակտ, նորմ) չկա,** սակայն արգելքի բացակայությունը դեռևս բավարար չէ դրա կիրառությունն իրավաչափ, թույլատրելի որակելու համար:

Կարծում ենք՝ **արգելքի (արգելող նորմի) բացակայությունը** դրոնի իրավաչափ կիրառման **առաջին պայմանն** է:

Ինչ վերաբերում է **երկրորդ պայմանին,** ապա դրա կիրառումը պետք է **երաշխավորի մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի**

---

[30] Անհրաժեշտ է նշել, որ **մարդու հիմնարար իրավունքներն** անձի՝ ապրելու, կենսագործունեության համար առանցքային հնարավորություններ են, առանց որոնց մարդը՝ որպես բանական էակ, գոյություն ունենալ չի կարող կամ գոյությունը ոչ լիարժեք կլինի: Հետևաբար, վերը նշված արգելված միջոցների օգտագործումն **անհնարին է դարձնում** բանական էակի կենսագործունեության համար անհրաժեշտ հնարավորություններից ամբողջությամբ կամ մասնակի օգտվելը, **այդ թվում՝ կյանքի, ապրելու իրավունքի իրացումը:**

[31] Պետության և իրավունքի տեսություն: Ուսումն. ձեռնարկ: Հեղ. խումբ: Գիտ. խմբագիրներ՝ Ղամբարյան Ա. Մուրադյան Մ., 3-րդ լրամշ. հրատ., 2018, էջ 351:

նորմերի պահպանումը, չանտեսումը, ընդ որում՝ վերջինս կարող է արտահայտվել **պարտավորեցնող նորմի** տեսքով: Օրինակ՝ Առաջին լրացուցիչ արձանագրության 57-րդ հոդվածի համաձայն՝ ռազմական գործողություններ անցկացնելիս (...) **հարձակման միջոցները և մեթոդներն ընտրելիս ձեռնարկեն գործնականորեն բոլոր հնարավոր նախազգուշական միջոցները,** որպեսզի խուսափեն (...):

Անհրաժեշտ է փաստել, որ մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության ակունքում **մարդասիրական վերաբերմունք ցուցաբերելու սկզբունքն է**[32]**:** Պատերազմների ընթացքում առավել խոցելի է դառնում մարդու կյանքի իրավունքի իրացման խնդիրը, հետևաբար՝ **անձին կամայական սպանությունից պաշտպանելու պարտականությունը՝** որպես միջազգային սովորութային իրավունքի կանոն, jus cogens (պարտադիր կատարման ենթակա) բնույթի նորմ, միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունք, դառնում է խիստ զգայուն առաջնահերթ հրամայական:

Պատերազմի ժամանակ ևս անհրաժեշտ է մարդասիրական մոտեցում ցուցաբերել, մասնավորապես՝ **արգելվում է անձանց** (թե՛ քաղաքացիական, թե՛ զինվորականներին) **խոշտանգել, անմարդկային, դաժան և նվաստացնող վերաբերմունքի ենթարկել:** Այսինքն՝ պատերազմի ժամանակ **հակառակորդի մարդկային ուժերի կրճատմանն ուղղված գործողությունները՝** ռազմական սուբյեկտներին (զինվորականներին, կոմբատանտներին) **սպանելը (կյանքից զրկելը)**, համարվում է **օրինական, իրավաչափ, ոչ անհիմն, ոչ կամայականորեն,** մինչդեռ **արգելվում է** հակառակորդի զինվորականին, այդ թվում՝ ռազմագերու կարգավիճակ ունեցող զինվորականին, խոշտանգել, դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի ենթարկել (այդ թվում՝ գերեվարվածին սպանել): Այսինքն՝ այստեղ շեշտադրվում էր թե՛ մարդու հիմնարար իրավունքի (կյանքի իրավունք, խոշտանգման արգելք) պաշտպանության, թե՛ միջազգային մարդասիրական իրավունքի կանոնների պահպանության կարևորությունը:

Ինչ վերաբերում է ռազմական դրոնի՝ միջազգային մարդասիրական իրավունքի կանոնների համապատասխանության հարցին, ապա անհրաժեշտ է փաստել, որ դրոնը՝

---

[32] Ճիշտ է՝ **կյանքի, ապրելու իրավունքը բացարձակ իրավունք չէ**, այսինքն՝ հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ անձը զրկվի կյանքից, և դա չդիտարկվի հանցագործություն, մասնավորապես՝ **անհրաժեշտ պաշտպանության, ծայրահեղ անհրաժեշտության** դեպքում:

որպես պատերազմ վարելու միջոց, բավարարում է տարբերակման[33], համաչափության[34], նախազգուշացման[35] և ռազմական անհրաժեշտության[36] կանոններին, հետևաբար՝ թույլատրելի է[37]:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

Վերոնշյալի լույսի ներքո՝ անհրաժեշտ է փաստել, որ միջազգային հանրությունը չունի համընդհանուր մոտեցում ***միջուկային զենքի*** *արգելքի, զանգվածային ոչնչացման զենքի նոր տեսակների՝* ***ռադիոլոգիական, ճառագայթային, ինֆրաձայնային*** *օգտագործման շրջանակների կամ լրիվ արգելքի նկատմամբ:*

Ինչ վերաբերում է դրոնի կիրառմամբ պայմանավորված՝ մարդու իրավունքների ենթադրյալ խախտումներին, ապա անհրաժեշտ է նշել, որ ***դրոնն իր կառավարելիության, վերահսկելիության շրջանակում ունակ է այնպիսի թիրախային հարվածներ հասցնել, հստակ գործողություններ իրականացնել****, որը կարող է ուղղվել միայն ռազմական իրավաչափ նպատակին հասնելուն՝ առանց մարդկանց իրավունքների լուրջ խախտումների:*

Սույն դեպքում ռազմական դրոնի կիրառության վերաբերյալ արգելող նորմ չկա, հետևաբար՝ **վերջինիս օրինական կիրառության առաջին պայմանը բավարարված է:** Ինչ մնում է երկրորդ պայմանին, ապա ռազմական դրոնն իր ֆունցիոնալ առանձնահատկություններով ունակ է այնպիսի **միջոց լինելու**, որը **կարող է**

---

[33] Առաջին լրացուցիչ արձանագրության 48-րդ հոդվածի համաձայն՝ (…) ընդհարման մեջ գտնվող կողմերը մշտապես պետք է **տարբերակեն քաղաքացիական բնակչությունը և մարտիկներին**, ինչպես նաև քաղաքացիական օբյեկտները՝ ռազմական օբյեկտներից, (…):

[34] Առաջին լրացուցիչ արձանագրության 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **երբ մի քանի ռազմական օբյեկտների միջև հնարավոր է ընտրություն՝ հավասարազոր ռազմական առավելություն ստանալու համար**, ընտրվում է այն օբյեկտը, որի վրա հարձակումը, ենթադրաբար, քաղաքացիական անձանց կյանքի և քաղաքացիական օբյեկտների համար կստեղծի ամենանվազ վտանգը:

[35] Ցամաքային կոնվենցիայի 27-րդ հոդվածի համաձայն՝ պաշարումների և ռմբակոծությունների ժամանակ **պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները**՝ որքան հնարավոր է շատ խնայելու կրոնի, արվեստի, գիտության և բարեգործության համար նախատեսված շենքերը, հիվանդանոցները և հիվանդների ու վիրավորների հավաքման վայրերը, եթե դրանք միաժամանակ չեն օգտագործվում ռազմական նպատակներով:

[36] Առաջին լրացուցիչ արձանագրության 14-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավող տերությունը **չի կարող բռնագրավել քաղաքացիական բժշկական կազմավորումները**, դրանց սարքավորումները, նյութերը (…):

[37] Մեկ այլ գիտական հոդվածի շրջանակում մանրամասն կանդրադառնանք ռազմական դրոնի իրավաչափ կիրառության հարցին՝ պատերազմի իրավունքի, միջազգային մարդասիրական իրավունքի լույսի ներքո:

բավարարել պատերազմի ժամանակ մարդու իրավունքների պաշտպանության, միջազգային մարդասիրական իրավունքի կանոնների պահպանության պահանջները:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ անհրաժեշտ է փաստել, որ ռազմական դրոնի՝ որպես պատերազմ վարելու միջոցի **արգելքի բացակայության իրավական հիմքերը** վերը նշված միջազգային-իրավական ակտերն են, իսկ **թույլատրելի կիրառության իրավական հիմքերը՝** մարդու իրավունքների պաշտպանության, միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի պահպանությանն ուղղված կանոնների և սկզբունքների ամբողջությունը:

THE NORMATIVE LEGAL BASIS FOR THE USE OF MILITARY DRONES AS A MEANS OF WARFARE

GEVORGYAN ARTAK

PhD in Law, Senior Lecturer at the Educational
Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia,
Senior Lecturer at the Armenian-Russian University

Abstract . The article identifies the criteria for defining a drone as an unmanned aerial vehicle and outlines the key characteristics of military drones. It provides a detailed analysis of the legal permissibility of drones as a means of warfare in the context of armed conflict and military operations. Furthermore, the study classifies such means and examines prohibited methods of warfare in two dimensions: those that are directly prohibited and those that are indirectly prohibited. Particular attention is given to the regulation of prohibited means of warfare under specific international legal instruments, with an emphasis on the protection of human rights.

Key words: military drone, prohibited means, prohibited weapons, right to wage war, protection of human rights.

НОРМАТИВНО-ПРАВОВАЯ ОСНОВА ИСПОЛЬЗОВАНИЯ ВОЕННЫХ ДРОНОВ КАК СРЕДСТВА ВЕДЕНИЯ ВОЙНЫ

ГЕВОРГЯН АРТАК

старший преподаватель Образовательного комплекса
Министерства внутренних дел РА,
старший преподаватель Армяно-Российского университета
кандидат юридических наук

Аннотация. В статье автор раскрыл критерии использования дрона как беспилотного летательного аппарата, представил его характеристики. Автор подробно представил вопрос о том, является ли дрон запрещенным или разрешенным средством ведения войны во время войны, классифицировал эти средства, представил запрещенные средства в двух измерениях: прямо запрещенные и косвенно запрещенные, представил запрещенные средства ведения войны в соответствии с конкретными международно-правовыми актами, подчеркнув важность защиты прав человека.

Ключевые слова: военный дрон, запрещенные средства, запрещенное оружие, право на ведение войны, защита прав человека.

Օգտագործված գրականության ցանկ

Ա. Միջազգային-իրավական ակտեր, նորմատիվ-իրավական ակտեր

1. Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին 1944 թվականի Չիկագոյի կոնվենցիա
2. «Միջազգային զինված կոնֆլիկտների զոհերի պաշտպանության վերաբերյալ» Ժնևի 1949 թվականի օգոստոսի 12-ի կոնվենցիա
3. «Պատերազմի ժամանակ խեղդող, թունավոր կամ այլ գազերի և պատերազմի մանրէաբանական մեթոդների կիրառման արգելքի մասին» Ժնևի 1925 թվականի կոնվեցիա
4. «Որոշակի ավանդական զենքերի օգտագործման արգելքների կամ սահմանափակումների մասին, որոնք կարող են համարվել չափազանց վնասակար կամ ոչ տարբերակված ազդեցություն ունեցող» 1980 թվականի կոնվենցիա
5. «Հակահետևակային ականների օգտագործման, կուտակման, արտադրության, փոխանցման արգելման և դրանց ոչնչացման մասին» 1997 թվականի կոնվենցիա
6. «Մանրէաբանական (կենսաբանական) և թունավոր զենքի մշակման, արտադրության, կուտակման արգելման և դրանց ոչնչացման մասին» 1972 թվականի կոնվենցիա
7. «Քիմիական զենքի մշակման, արտադրության, կուտակման և օգտագործման արգելման և դրա ոչնչացման մասին» 1993 թվականի կոնվենցիա
8. 1929 թվականի միջազգային օդային փոխադրումների վերաբերյալ որոշակի կանոնների միավորման մասին կոնվենցիա (Վարշավայի կոնվենցիա)
9. 1952 թվականի օդային տարածքում օտարերկրյա ինքնաթիռների կողմից երրորդ կողմերին պատճառված վնասի մասին կոնվենցիա (Հռոմի կոնվենցիա)
10. 1970 թվականի ինքնաթիռների անօրինական զավթումը կանխելու մասին կոնվենցիա (Հաագայի կոնվենցիա)
11. 1971 թվականի քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների կանխարգելման մասին կոնվենցիա (Մոնրեալի կոնվենցիա)
12. «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենք

Բ. Տեսական գրականություն և էլեկտրոնային ռեսուրսներ

1. Պետության և իրավունքի տեսություն: Ուսումն. ձեռնարկ: Հեղ. խումբ: Գիտ. խմբագիրներ՝ Ղամբարյան Ա. Մուրադյան Մ., 3-րդ լրամշ. հրատ., 2018, էջ 351
2. Arakelian M., Bekhruz Kh., Yarova L., Prohibited Means and Methods of Armed Conflicts, Amazonia Investiga, Vol. 9, Núm. 26, Febrero 2020, p. 353

3. Biological Warfare, Biological Agents, https://www.sciencedirect.com, (վերջին մուտք՝ 29.12.2025).
4. Boothby W., Weapons and the Law of Armed Conflict, New-York, 2009, p. 412.
5. Cadets and Junior Canadian Rangers Group Order, 8030-13, Unoccupied Aircraft Systems, 3, Definitions, https://u.to/595xIg, (վերջին մուտք՝ 29.12.2025)
6. Chamayou G., A theory of the Drone, 2015, p. 11.
7. Ghoshroy S., Montonen C., Scheffran J., Webb S., Missile Defense Systems and Weapons in Space: Anti-satellite Weapons and Ballistic Missile Defense: the Siamese Twins? www.researchgate.net/publication/357470139, (վերջին մուտք՝ 29.12.2025).
8. https://u.to/7d5xIg, (վերջին մուտք՝ 29.12.2025)
9. https://u.to/-d5xIg, վերջին մուտք՝ 29.12.2025):
10. Igoe Walsh J., The Effectiveness of Drone Strikes in Counterinsurgency and Counter Terrorism Campaigns, Strategic Studies Institute and U.S. Army War College Press, V- 2013, p. 32.
11. Kakaes K., Drone Wars Transforming Conflict, Law, and Policy, 2014, Cambridge University Press, pp. 359 – 387.
12. Kutty A., Tavawalla H., Parikh V., Article, The Future of Drones: Can they be Legitimized? 2015, https://u.to/4N5xIg, (վերջին մուտք՝ 29.12.2025)
13. Sluka J., Death from above, Military Review, Article, 2013, p. 89.
14. Surveillance Drones, https://u.to/995xIg, (վերջին մուտք՝ 29.12.2025).
15. Valdes R., How the Predator UAV Works, How Stuff Works, 1-2004, https://u.to/9d5xIg, (վերջին մուտք՝ 29.12.2025).
16. Walsh J., University of North Carolina at Charlotte Precision Weapons, Civilian Casualties, and Support for the Use of Force // Political Psychology, Vol. 36, 2015, p. 507
17. www.icao.int, (վերջին մուտք՝ 29.12.2025)

Հոդվածը գրախոսվել է 13.02.2026
Ներկայացվել է տպագրության 20.02.2026